ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և բռնության - Փուլ 2-րդ

Իրականացման ժամանակահատված: 01.01.2024 - 30.06.2026

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 5 000 000

Ընդհանուր բյուջե: € 5 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UN Women Europe and Central Asia, UNFPA Europe and Central Asia

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/unfpa.eecaro

Նախագծի կայքէջ: eca.unwomen.org/en/what-we-do/ending-violence-against-women/eu-4-gender-equality

Նախագծի նկարագրություն:

«ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և բռնության» ծրագրի երկրորդ փուլը նպատակ ունի նվազեցնել կանանց և տղամարդկանց միջև գենդերային խտրական վերաբերմունքներն ու գործելակերպերը ինստիտուցիոնալ և համայնքային ոլորտներում, ներառյալ չվճարվող տնային և խնամքի աշխատանքը, շարունակելով և ընդլայնելով ծրագրի առաջին փուլի ընթացքում իրականացված հաջող նախաձեռնություններն ու միջամտությունները (https://euneighbourseast.eu/projects/eu-project-page/?id=1324)։
Սա ներառում է, սակայն չի սահմանափակվում, սոցիալական նորմերի փոփոխության վերաբերյալ ապացույցների և գիտելիքի ձևավորմամբ, նորարարական հաղորդակցման և շահերի պաշտպանության արշավների իրականացմամբ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից իրականացված հաջող միջամտությունների համար ենթադրամաշնորհների շարունակմամբ։ Ծրագիրը կստեղծի նոր և կընդլայնի արդեն գործող Հայրերի դպրոցները, կզարգացնի միջնորդների և գենդերային պաշտպանների կարողությունները, կնպաստի խնամքի և տնային պարտականությունների հավասար բաշխմանը՝ խթանելով ընտանիքահեն քաղաքականությունների ներառումը ազգային օրենսդրության մեջ և դրանց տարածումը ոչ պետական դերակատարների շրջանում, և այլն։
Ծրագիրն իրականացվում է համատեղ՝ ՄԱԿ-ի Կանանց կազմակերպության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից Արևելյան գործընկերության վեց երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում,

Ակնկալվող արդյունքներ:

1. Ինստիտուտների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլ հիմնական շահագրգիռ կողմերի կարողությունների և գործիքների բարելավում՝ գենդերային անհավասարություններին, խտրական կարծրատիպերին և դերերին արձագանքելու նպատակով։
2. Թիրախային խմբերի շրջանում կանանց իրավունքների և գենդերային խտրական սոցիալական նորմերի վերաբերյալ գիտելիքի և իրազեկվածության բարձրացում։
3. Հանրային և մասնավոր աջակցության միջոցների բարելավում՝ ներգրավված հայրության գործելակերպերի և ընտանիքահեն քաղաքականությունների խթանման նպատակով։